ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՆՈՐԱԲԱՑԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРАРАТСКИЙ МАРЗ
НОРАБАЦИ АМАЙНКАПЕТАРАН

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորաբաց համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորաբաց, 61855, norabats.ararat@mta.gov.am

N 318

<<10>>.12.202

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Պ-Ն. Գ.ՄԱՐԳՍՅԱՆԻՆ

Կից ներկայացվում է Նորաբաց համայնքի ավագանու թիվ 37, 38-Ն,39, 40-Ն որոշումների կրկնօրինակները:
Առդիրտասերեք թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Գ.ԳԱԼՍՏՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորաբաց համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորաբաց, 61855, norabats.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 37

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջով.

ավագանին որոշում է.

ՀԱՍՏԱՏԵԼ ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 10-ՆԻՍՏԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՕՐԱԿԱՐԳԸ

1.Նորաբաց համայնքի վարչական և ֆոնդային բյուջեի ծախսային մասում փոփոխություն կատարելու մասին

2.Հողի հարկի արտոնությունից օգտվելու մասին

3.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորաբաց համայնքի 2021թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՊԵԼՅԱՆ ՎՐԵԺ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՆՈՒՇ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՄԿՐՏԻՉ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԼԱՐԻՍԱ

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ՂԱՋԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԱԼՈՒՍՏ ԳԱԼՍՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորաբաց համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորաբաց, 61855, norabats.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 38-Ն

ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻՕ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջով.

ավագանին որոշում է.

Նորաբաց համայնքի վարչական բյուջեի ծախսային մասում կատարել փոփոխություն:

11.1.2Պահուստային միջոցներ <<1163.0>> փոխել <<0>> թվով

4891պահուստային միջոցներ պակասեցնել 1163.0հազ.դրամ

01.1.1օրնںդիր և գոչծադիր մարմին <<29106.0>>փոխել <<29126.0>>թվով

4111աշխատավարձ ավելացնել 20.0հազ.դրամ

01.6.1ընդհանուր բնույթի հանրային ծառ. <<1640.0>>փոխել<<2283.0>>թվով

4241մասնագիտական ծառայություն ավելացնել 643.0հազ.դրամ

10.7.1սոցիալական հատուկ ծառայություն <<3100.0>>փոխել <<3600.0>>թվով

4729այլ նպաստ բյուջեից ավելացնել 500.0հազ.դրամ

Նորաբաց համայնքի ֆոնդային բյուջեի ծախսային մասում կատարել փոփոխություն

01.6.1ընդ.բնույթի հանրային ծառայություն <<11403.353.9>>փոխել <<5903.353.9>>թվով

5112շենք շինության կառուցում պակասեցնել 5500.0հազ.դրամ

06.4.1 արտաքին լուսավորություն <<27189.310.0>>փոխել <<32689.310>>թվով

5112շենք շինության կառուցում ավելացնել 5500.0հազ.դրամ

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՊԵԼՅԱՆ ՎՐԵԺ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՆՈՒՇ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՄԿՐՏԻՉ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԼԱՐԻՍԱ

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ՂԱՋԱՐ

/ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԼՈՒՍՏ ԳԱԼՍՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորաբաց համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորաբաց, 61855, norabats.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 39

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հողի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջով.

ավագանին որոշում է.

Նորատունկ խաղողի այգի հիմնած սեփականատեր Շմավոն Գրիգորյանին տալ հողի հարկի արտոնություն 20201թվականի հունվար ամսից;

Նորատունկ խաղողի այգի ծածկագիր03-067-0055-0023 0.24հա 4-տարի ժամկետով

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՊԵԼՅԱՆ ՎՐԵԺ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՆՈՒՇ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՄԿՐՏԻՉ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԼԱՐԻՍԱ

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ՂԱՋԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԼՈՒՍՏ ԳԱԼՍՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորաբաց համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորաբաց, 61855, norabats.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 40-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ 2021ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ի մասի 18-րդ կետի <<տեղական տուրքերի և վճարների մասին>> օրենքի 10-րդ, 11-րդ,12-րդ, 123-րդ,14-րդ հոդվածների , << Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով.

ավագանին որոշում է.

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորաբաց համայնքի 2021թվականի տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը:

1/Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության /տեղադրման/ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

Մինչև 300քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի այդ թվում այգեգործական /ամառանոցային տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ.

բ.սույն կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

-200-ից մինչև500քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ.

-500-ից մինչև 1000քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ.

-1000-ից մինչև 3000քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ.

-3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հազար հինգ հարյուր դրամ.

-20և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

2/համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման,վերականգման,արդիականացման և բարեկարգման աշխատանքների /բացառությամբ հայաստանի հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի / թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա.չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն·ընդլայնող այլ կառույցների/ այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ հազար հինգ հարյուր դրամ.

բ.բացի շենքերի և շինությունների վերակառուցման,ուժեղացման,վերականգման կամ արդիականացման աշխատանքներից՝ նախատեսվում է նաև կցակառույցների վերակառուցումների,շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի «ենթակետի «ա» պարբե- րությունով սահմանված դրույքաչափից կիռարվում են նաև նոր, շինարարության համար սույն

հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ.նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ստորգետնյա/ շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3/Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի/ թույլտվության համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

4/համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար, օրացույցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

5/համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար՝ երեսուն հազար դրամ.

6/համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար, օրացույցային տարվա համար՝ քսանհինգ հազար դրամ:

7/համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և /կամ/ օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակ-Ների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝

ա.ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսակի համար՝

-մինչև 26քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ·հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երկու հազար դրամ.

-26-ից մինչև 50քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝հինգ հազար դրամ.

-50-ից մինչև 100քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝վեց հազար հինգ հարյուր դրամ.

-100-ից մինչև 200քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տաս հազարն դրամ.

-200-ից մինչև 500քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝տասներկու հազար հինգ հարյուր դրամ.

500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝քսաներկու հազար հինգ հարյուր դրամ.

բ.ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսակի համար՝

-մինչև 26քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երկու հազար դրամ.

-26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ.

-50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար հինգ հարյուր դրամ.

-100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տաս հազար դրամ.

-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներկու հազար հինգ հարյուր դրամ

-500և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և·ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսաներկու հազար հինգ հարյուր դրամ.

8/իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանվա

բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար յուրաքանչյուր օրվա համար՝ հարյուր յոթանասունհինգ դրամ մեկ քառակուսի մետրի համար.

9/համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և

բաղնիքներին /սաունաներին/ ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար՝

ա.առևտրի օբյեկտների համար՝ հինգ հազար դրամ

բ.հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար տասներկու հազար հինգ հարյուր դրամ

10/համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոներին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսակի համար սահմանվում է՝

ա.հիմնական շինությունների ներսում՝

-մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

-26-ից մինչև 50քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող սննդի օբյեկտի համար՝երկու հազար հինգ հարյուր դրամ.

-50-ից մինչև 100քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ.

-100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող սննդի օբյեկտի համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ.

-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տաս հազար դրամ.

-500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում

-մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝հինգ հարյուր դրամ.

-26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հարյուր դրամ.

-50-ից մինչև 100քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մեկ հազար դրամ.

-100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար դրամ.

-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար դրամ.

-500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ.

11/ավագանու կողմից սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա.ալկահոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար հազար դրամ.

բ.թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝հազար յոթ հարյուր հիսուն դրամ.

գ.սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ.

դ.այլ արտաքին գովազդի համար՝ յոթ հարյուր հիսուն դրամ.

ֆ.դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25%-ը՝ հարյուր ութսունյոթ դրամ հիսուն լումա.

զ.եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլարտաքին գովազդ տեղադրելու համար սահմանված տուրքի 10%-ի չափով՝ յոթանասունհինգ դրամ.

12.Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը /զինանշան,անվանում և այլն/, որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ:

13/Համայնքի տարածքում մարդատար-տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների, միկրոավտոբուսների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար օրացույցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տաս հազար դրամ.

14/Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանդստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայությունների իրականացման և /կամ/ մատուցման թույլտվության համար, օրացույցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

15/Համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար՝ քսանհինգ հազար դրամ.

16/համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործնեության թույտվության համար՝

ա.կարաոկեի,բաղնիքի,սաունայի և շոգեձաղնիքի համար՝

օրացույցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում՝ տաս հազար դրամ.

բ.հեստապարային ակումբի համար՝ օրացույցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում՝ հիսուն հազար դրամ.

2.Սույն որոշման 1-ին կետով սահմանված դրույքաչափերի համար կիրառվել է 0.5գործակիցը:

3.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորաբաց համայնքի 2020թվականի տեղական վճարների տեսակները և հետևյալ դրույքաչափերը:

1/Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ երկու հարյուր դրամ.

2/համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ տաս հազար դրամ.

3/ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված ածխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվություն ձևակերպելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ տաս հազար դրամ.

4/ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո՝ շենքերի և շինությունների /այդ թվում՝ դրանց վերակառուցումը, ուժեղացումը,արդիականացումը,ընդլայնումն ու բարեկարգումը/ կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար տաս հազար դրամ.

5/համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում, փաստաթղթերի /փաթեթի/ նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ քսան հազար դրամ.

6/համայնքապետարանի կողմից մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հազար դրամ.

7/համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց հատուցման վճար՝ հինգ հազար դրամ.

8/համայնքապետարանի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝

ա.համայնքում բնակվող յուրաքանչյուր բնակիչի համար ամսական աղբահանության վճար սահմանել՝ հարյուր դրամ

բ. առևտրի , հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հիսուն դրամ

գ.հյուրանոցներ և հյուրանոցային ծառայություններ յուրաքանչյուր ամսվա համար մեկ քառակուսի մետր մակերեսի համար քսան դրամ

դ.արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի մետր մակերեսի համար՝ հինգ դրամ

ե.գիտական,կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության,մշակույթի, արվեստի,կրոնական,պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ երեք դրամ.

զ.վարչակառավարչական,ֆինանսական,կապի,ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ տասնհինգ դրամ.

9/համայնքը սպասարկող անասնաբույժի կողմից մատուցվող վճարովի անասնաբուժական ծառայությունների դիմաց վճարել.

1.կենդանիների հիվանդությունների բուժման,կանխարգելման հարցերով խորհրդատվություն 500 դրամ

բ/ծննդօգնություն

թեթև միջամտություն	1000դրամ
ծանր միջամտություն	5000դրամ

գ/վարակիր հիվանդություններին կենդանիների իմունակկանխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում կախված կենդանու տեսակից /բացառությամբ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում,պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների/

մանր եղջրավոր անասունների համար՝ 100 դրամ

խոշոր եղջրավոր անասունների համար՝ 200դրամ

դ/կենդանիների արտաքին և ներքին մակաբույծերի դեմ պայքար 200դրամ

ե/ախտահանություն 1քմ. 200դրամ

զ/միջատազերծում /դեզինսեկցիա/ 1քմ համար 100դրամ

է/կրծողների ոչնչացում /դեռատիզացիա/ 1քմ համար 200գրամ

ը/արհեստական սերմնավորման համար՝ 5000դրամ

թ/կենդանու հերձում՝

մանր եղջրավոր անասունների համար՝ 1000դրամ

խոշոր եղջրավոր անասունների համար՝ 3000դրամ

ժ/կենդանու բուժում կախված հիվանդության տեսակից և կենդանու տեսակից՝յուրաքանչյուր այցելության համար՝

մանր եղջրավոր անասունների համար՝ 1000դրամ

խոշոր եղջրավոր անասունների համար՝ 2000դրամ

ի/կենդանիների նախասպանդային զննում՝

մանր եղջրավոր անասունների համար՝ 1000դրամ

խոշոր եղջրավոր անասունների համար՝ 2000դրամ

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՊԵԼՅԱՆ ՎՐԵԺ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՆՈՒՇ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՄԿՐՏԻՉ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԼԱՐԻՍԱ

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԶԱՔԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԼՈՒՍՏ ԳԱԼՍՏՅԱՆ